

Երեւան երէկ յայտարարեց, որ կ'ընդդիմանայ Ազրպէյճանի մէջ ՕԹԱՆԻ փնտրական խարխիւներու հաստատման գաղափարին: Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան բանբերը ըսաւ, որ Երեւան համոզուած է, որ Հայաստանի հողերուն վրայ ուղակի կ'ընդդիման փնտրական ներկայութիւնը շրջանին ապահովութիւնը կ'երաշխայուրէ: Ան նաեւ նշեց, որ Պաքուի ծրագիրը՝ ներկայ հաստատակաշարութիւնը խախտելու, կրնայ վտանգ մը ըլլալ շրջանային կայունութեան:

(ՌՈՅԹԸՐԶ)

ԻՍՐԱՅԷԼ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ԶԻ ՓԱՓԱՔԻՐ

ՅԱՅՏԱՐԱՐԵՅ ՆԱԽԱԳԱՆ ԼԱՀՈՒՏ

Նախագահ գործիչ Լահուտ երէկ Արարական Լիկայի վեհաժողովին արտասանած իր խօսքին մէջ ընդգծեց, որ Իսրայէլ խաղաղութիւն չի փափաքիր, այլ դէմ է անոր եւ կը բաւարարուի ապահովութիւն ստանալով:

«Հարաւային Լիբանանի մէջ մասնէն Իսրայէլի հեռացումը խաղաղութեան ուղղութեամբ քայլ մը չէր, այլ փախուստ՝ խաղաղութենէն», ըսաւ հանրապետութեան նախագահը:

Լահուտ յայտարարեց. «Երբ բանակը հարաւ առաքեցինք մեր եւ ո՛չ Իսրայէլի շահերուն նպաստող ձեւով, մեր դէմ սկսաւ տնտեսական պատերազմ մը, որ մեզ գրկեց նուիրատու երկիրներու խորհրդաժողովէն եւ հարաւը գրկեց օժանդակութիւններէն»:

«Լիբանան կը պատժուի եւ տնտեսական շրջափակումի կ'ենթարկուի, որովհետեւ մերժած է Իսրայէլի ապահովութիւնը երաշխաւորելը», ըսաւ նախագահը, դիտել տալով, որ Միջին Արեւելքը կը գտնուի խաչմերուկի մը առջեւ, որուն մէջ ճամբան բռնած են արաբները, հասնելու համար արդար եւ ամբողջական խաղաղութեան, որուն արդիւնքը պիտի ըլլայ ապահովութիւնը Իսրայէլի բռնած է երկրորդ ուղին, եւ կ'ապաւինի իր բռնագրաւող ուժին, ապահովութիւն ունենալու համար:

Լահուտ արար ղեկավարներէն պահանջեց որդեգրել համարարական յատուկ ռազմավարութիւն մը դիւանագիտական, քաղաքական, գիտնորական, ապահովական եւ տնտեսական մարզերէն ներս, պատրաստ ըլլալու համար բոլոր անկանկալներուն:

Նախագահ Լահուտ նաեւ ընդգծեց անհրաժեշտութիւնը անվերապահ զօրակցութիւն ցուցաբերելու պահեստիներէն ղեկավարութեան, Լիբանանի եւ Մուսուլի, ընդգծելով Իսրայէլեան բռնագրաւումին եւ անոր հետեւանքները դարձնելու համար: «Այս զօրակցութիւնը պէտք է ընդգրկէ տնտեսական, բարգաւաճման եւ մարդկային այլ բնագաւառները, որոնք Իսրայէլի գրգռումով

Շար.ը՝ էջ 10

ՍՖԷՅՐ ԱՐԺԱՆԱՑԱԻ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԵԱՆ

Մարտիններու Պուրոս Սֆէյր պատրիարքը Միացեալ Նահանգներ եւ Ֆրանսա տուած 42 օրեայ իր հովուական այցելութիւնը եզրափակելով երէկ կէսօրէ ետք ժամը 4:00ին ժամանեց Պէյրութի օդակայան:

Սֆէյր պատրիարքը ղեկավարեցին նախագահ գործիչ Լահուտի ներկայացուցիչ, հաղորդակցութեան միջնորդ նախարար Ժան Լուի Քրիտահի, նախարարներ, երեսփոխաններ եւ հոծ բազմութիւն մը:

Օդակայանի պատուով հիւրասրահին մէջ թղթակցներու հարցումներուն պատասխանելով՝ Սֆէյր ըսաւ, որ շրջապատին ընթացքին ներկայացուցած է շատ պարզ պահանջ մը. լիբանանեան հայրենիքի անթերի գերիշխանութիւնը, անկախութիւնն ու ազատ որոշումը, որուն շուրջ միաձայն են բոլոր լիբանանցիները, նոյնիսկ եթէ ոմանք բարձրաձայն չեն յայտարարել իրենց այս կեցուածքը:

Շար.ը՝ էջ 9

ԹՈՒՐԹԻՈՅ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԱԳՆԱՊԸ

ԱԻԵԼԻ ԾԱՆՐԱԿՇԻՌ

ԿՐՆԱՅ ԴԱՌՆԱԼ

ԿՐՄԵ Զ. ՏԵՐՎԻՉ

Թուրքիոյ տնտեսութեան նոր նախարար Բեւալ Տերվիչ Երկուշաբթի օր պաշտօնը սկսեց, թէ իր երկրին տնտեսական տագնապը կրնայ աւելի եւս խորանալ, եթէ Դրամական Միջապագային Ֆոնտը, Համաշխարհային Դրամատունը եւ այլ կազմակերպութիւններ «անհաւանորոշ» օժանդակութիւն չյատկացունեն Թուրքիոյ:

Սակայն նշեալ կազմակերպութիւններուն տնօրէններուն եւ Մ. Նահանգներու գանձատան պատասխանատուներու հետ տեսակցութիւններու համար Տերվիչի արագօրէն կազմակերպուած Ուաշինկթըն այցելութիւնը որեւէ արդիւնք չէ տուած, ինչ կը վերաբերի շուտափոյթ կերպով օժանդակութիւններու ձեռքբերումը: Տերվիչ յայտնած է, թէ տագնապալի տնտեսութեան օժանդակութիւն կրնայ հասնիլ հապիւ երկու շաբաթէն:

Այսուհանդերձ, իր տեսակցութիւններէն ետք տեղի ունեցած հարցազրոյցի մը ընթացքին, Տերվիչ ըսած է, թէ գոհ է, եւ թէ բանակցութիւնները «շատ լաւ անցած են»:

«Ծիրը ունինք, այժմ յաւելեալ 25ն 3 շաբաթի կարիքը ունինք թրքական ծրագիրը վերջնականացնելու համար», յայտնած է ան:

Նախքան իր տեսակցութիւնները, Տերվիչ թղթակցներու ըսած է, թէ պիտի փորձէ Մ. Նահանգներէն երկկողմանի օժանդակութիւն ապահովել:

Շար.ը՝ էջ 9

ԱՐԱՐԱԿԱՆ ՎԵՆԱԺՈՂՈՎԸ ՍԿՍԱԻ ԻՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՆ

ՄՈՒՊԱՐԱՔ ԿՈՉ ՈՒՂՂԵՑ ԱՐԱՐԱԿԱՆ ՇԱՇՏՈՒԹԵԱՆ ԱՍԱՏ ՅԵՂԱՊԱՍԵՑ ԿՈՉԵՑ ԻՍՐԱՅԷԼ ԱՅԻՆԵՐԸ

Արաբական երկիրներու ղեկավարները երէկ Ամմանի մէջ սկսան երկօրեայ վեհաժողովի մը, որուն ընթացքին կը յուսան համախոհութիւն մը գոյացնել Իրաքի պատժամիջոցներուն մասին, ինչպէս նաեւ պորակցութիւն յայտնել Իսրայէլի դէմ պայքարող պաղեստինցիներուն:

Եգիպտոսի նախագահ Հիւսնի Մուպարաք իր ձառնի մէջ կոչ ուղղեց արաբական հաշտութեան մը՝ ձեռնարկուելու համար «արաբ ընտանիքին» ներքին վէճերէն: Մուպարաք, որ Հոկտեմբերին հիւրընկալած էր արաբական արտակարգ վեհաժողով մը, ըսաւ, որ արաբները կը դատապարտեն Իսրայէլի յարձակողական քաղաքականութիւնն ու պաղեստինցիներուն դէմ որդեգրուած միջոցառումները:



Մուպարաք՝ ձախիմ կը խօսակցի Զազաֆիի (կեդրոնը) եւ Ապտալլա թագաւորին հետ:

Րը կը դատապարտեն Իսրայէլի յարձակողական քաղաքականութիւնն ու պաղեստինցիներուն դէմ որդեգրուած միջոցառումները: Բացման նիստին խօսք տուաւ նաեւ Յոնդանանի Ապտալլա Բ.

թագաւորը, որ ներկաներին պահանջեց մէկ վայրկեան լռութեամբ յարգել յիշատակը հարիւրաւոր պաղեստինցի կոհերուն, որոնք ինկան անցնող վեց

Շար.ը՝ էջ 10

ՊԱՂԵՍՏԻՆՅՅԻ ՄԸ ԱՆՉՆԱՍՊԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԿԱՏԱՐԵՑ

Երկու պայթումներ երէկ ցնցեցին Երուսաղէմի տասնեակ մը վիրաւորներ պատճառելով: Իսրայէլացիները, որոնք արդէն իսկ բարկացած էին պաղեստինցիներուն դէմ հրեայ մանուկի մը սպանութեան համար (Երկուշաբթի օր, Հեպրոնի մէջ), ընդգրկեցան երէկուան պայթումներուն դէմ:

Ոստիկանութիւնը յայտնեց, որ պաղեստինցի մը անձնասպանական զործողութիւն կատարեց օրօպիլսի մը մօտ, Երուսաղէմի հրէական թաղամասի մը մէջ: Պաղեստինցիներ ինքզինք պայթեցուցած է՝ քսաներկու վիրաւորներ



Ոստիկաններ կը ստուգեն ակացուած ինքնաշարժը:

խելով: Ականատեսներ ըսին, որ պաղեստինցիներ պայտուակ մը ուսին, օրօ-

պիլսի մէջ կը գտնուէր: Պայթումը տեղի ունեցած Ծար.ը՝ էջ 9

ԱԶՐՊԵՅՃԱՆ ՊԵՏԻ ԵՒ ԴԱՌՆԱՅ ԵԳԻՊՏՈՍԻ ԳՈՐԾԸՆԿԵՐԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՄԷՋ

ԿՐՄԵ ԱԼԻԵՒ

Ազրպէյճանի նախագահ Հայտար Ալիեւ յայտնեց, որ Ազրպէյճան Անգրկովկասի մէջ Եգիպտոսի գործընկերը պէտք է դառնայ:

Եգիպտոսի արտաքին գործոց նախարար խորհրդակցական Մոհամէտ Մեհտի Ֆաթիլայի հետ հանդիպումի մը ընթացքին, անդրազաւանջով Եգիպտոսի նախագահ Հիւսնի Մուպարաքի Պաքու յառաջնորդութեան, Ալիեւ ըսաւ, որ Ազրպէյճան արարական աշխարհի գորակցութեան պէտք ունի Լեռնային Ղարաբաղի հարցին լուծման համար: Ան կարեւոր նկատեց երկու երկիրներու նախագահներուն փոխադարձ այցելութիւնները:

Իր կարգին, Ֆաթիլայ ըսաւ, որ Գահրի կարեւոր կը նկատէ Պաքուի հետ գործակցութեան զարգացումը, մասնաւորաբար՝ տնտեսական մարզին մէջ:

Եգիպտական պատուիրակութեան մաս կը կազմեն գործարարներ եւ քարտէզի ազգային ընկերութեան տնօրէնը: Պաքուի մէջ պատուիրակութիւնը քննարկեց ղեկորարարի արտադրման եւ քարտէզի մարզին մէջ գործակցութեան առնչուող հարցեր:

ԱԶԵՐԻԱԿԱՆ ՄԱՄՈՒԸ ԿԸ ԳՐԵ

«ԿԱՐԵԼԻ» ԵՒ ՊՃՆԱՍԻՐ ԶՕՐԱՎԱՐՆԵՐՈՎ ՊԱՏԵՐԱԶՄ ԾԱՀԻԼ»

Ազրպէյճանական «Ֆեմիտա» քերթ, անդրադարձնալով Լեռնային Ղարաբաղի տագնապին զինուորական լուծման մասին վերջին յայտարարութիւններուն, հարց կ'ուղղէ, թէ «արիւթք կարելի» է պատերազմը յարթել պնդանքի գորակարներով:

Թերթը կը մշէ, որ վերջին շուրս տարիներուն ընթացքին իրենք արեւի քան 50 յոդում հրապարակած են Ազրպէյճանի պաշտպանութեան ցախարարութեան մէջ փտածութեան կաշտակերութեան եւ միտակցած այլ երեւոյթներու մասին:

Խորհրդարանի մասկիմ երեսփոխան, խորհրդային հերոս եւ ակադեմիկոս Զիլա Պոնտատով, որ սպանուեցաւ 1997ին, յիշեալ հարցերը քաղաքային առիթներով արձարած էր խորհրդարանի մէջ: Սակայն ցախարարութիւնը ոչ մէկ պատասխան տուած էր այլ հարցադրումներուն: Թերթին համաձայն, ներկայիս այլ հարցերու ծախքը կը բացայայտուի, ինչպէս պաշտպանութեան մասին ցախարարին եւ Սուրաբ Նուսէյնովի միջեւ կ'ապերը (1993ին եւ 1994ին պետական հարուածի երկու փորձեր կազմակերպած), ցախարարութիւնը կ'ազմակերպուի:

Շար.ը՝ էջ 9

ՔԻ ՈՒԵՍԹԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՐԱԴԻ ՏԱԳՆԱՊԻՆ ԼՈՒԾՈՒՄ ՊԻՏԻ ԶԲԵՐԷ

ԿՐՄԵ ԿՈՒԼԻԵՒ

Ազրպէյճանի արտաքին գործոց նախարար Վիլայէթ Կուլիեւ ըսաւ, որ Հայաստանի եւ Ազրպէյճանի նախագահներու Քի Ուեսթի մէջ հանդիպումը հազու թէ կարենայ լուծում մը գտնել Լեռնային Ղարաբաղի տագնապին: Ան նաեւ յայտնեց, որ նախագահները պիտի բաւարարուին առանցքային խնդիրներու շուրջ տեսակէտներ փոխանակելով:

Կուլիեւ յայտարարեց, որ Պաքուի պատուիրակութիւնը Քի Ուեսթի մէջ պիտի մնայ տասը օր, իսկ նախագահ Քոչարեանի հետ բանակցութիւններէն առաջ տեղի պիտի ունենան ազրպէյճանական պատուիրակութեան հանդիպումները Միացեալ Նահանգներու կարգ մը բարձրաստիճան պաշտօնատարներու հետ: Ան շրջանցեց Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծման գծով Մոսկուայի մէջ կատարուելիք հանդիպման հարցը, սակայն չշեղեց, որ Ռուսիա կը նկատուի տագնապի լուծման ամենահաւանական միջնորդներէն մէկը:

Ռուս-ազրպէյճանական յարաբերութիւններուն անդրադառնալով՝ Կուլիեւ նշեց, որ Ալիեւի Մոսկուա կատարելիք այցելութեան ժամանակ նախատեսուած է Ռուսիոյ մէջ ազերիներու եւ Ազրպէյճանի մէջ ռուսերու իրաւական կարգավիճակին մասին համաձայնագրի ստորագրումը:

● ԱԶՐՊԵՅՃԱՆԻ նախագահ Հայտար Ալիեւ 26-27 Ապրիլին պիտի մասնակցի Պոլսոյ մէջ կայանալիք թրքա-խօս երկիրներու տարեկան վեհաժողովին: Սակայն առաջիկայ յայտնի չէ, թէ Ալիեւ պիտի մասնակցի կատարած ծրագրի եզրերը երկիրներու վեհաժողովին:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՐԱԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

ՆԱԽԱԳԱՀ ՂՈՒԿԱՍԵԱՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՔԱՍՓՐԶԻՔԸ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան ցախարահ Արկաղի Ղուկասեան երկուշաբթի օր ընդունեց ԼԱՀԿԻ ցախարահի անձնակազմի անդամները: Անցնելով Քասփրջիքը:

Հանդիպումին քննարկուեցան Լեռնային Ղարաբաղի տագնապին լուծման հետեւեղանակներուն, ինչպէս՝ ԼՂՀ - Ազրպէյճան սահմաններու վերահսկողական ընդունուածներուն սանցիւղ հարցերը:

(ԱՐՄԵՆՓՐԵՍ)

ՆԱԽԱՐԱՐ Ս. ՍԱՐԳՍԵԱՆԻ ԳԼԽԱԻՈՐԱԾ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԿՒՅՑԵԼԷ

Հայաստանի պաշտպանութեան նախարար Սերժ Սարգսեանի գլխաւորած պատուիրակութիւնը շաբաթակիցը հասաւ Աթէնք, ուր պիտի մնայ մինչեւ 30 Մարտ:

Այցելութեան ընթացքին նախարար Սարգսեան հանդիպումներ պիտի ունենայ իր յոյն պաշտօնակից Ալեքս Յոսիաթոսիոսի, սպառազինութեան բաժանմունքի պետ Քոլիլիսի եւ Յունաստանի զինուորական ճարտարարութեան, ուսումնասիրութեան եւ արհեստագիտութեան բաժանմունքի ընդհանուր տնօրէն Իոանիս Տրոսոսի հետ:

Հանդիպումներու ընթացքին պիտի քննարկուին երկկողմանի զինուորական գործակցութեան, միացեալ

Շար.ը՝ էջ 9

ԵՐԵՒԱՆ ԵՒ ԼՈՆՏՈՆ ԿԸ ԶԱՐԳԱՅՆԵՆ ԻՐԵՆՑ ՄԻՋԵԻ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Հայաստանի մէջ Բրիտանիոյ դեսպան Թիմոթի Ճոնզ յայտնեց, որ հակառակ այն իրողութեան, որ Հայաստան եւ Բրիտանիա աշխարհագրականօրէն կը գտնուին Եւրոպայի ծայրամասերուն վրայ, սակայն յաջողութեամբ կը զարգացնեն իրենց գործակցութիւնը:

Հայաստանի մէջ Բրիտանական Շաբաթի կայացման առիթով տուած մամուլի ասուլիսի ընթացքին, դեսպան Ճոնզ ըսաւ, որ Բրիտանիոյ ժողովուրդը Հայաստանի մասին տեղեակ է նաեւ Լեռնային Ղարաբաղի տագնապին ընդմէջէն: Դեսպանին համաձայն, տագնապին լուծումը կարելիութիւն պիտի ստեղծէ «սահմանները բանալու», որ իր կարգին պիտի նպաստէ Հայաստանի մէջ ներդրումներու բարձրացման:

Բրիտանացի դիւանագէտը վստահութիւն յայտնեց, որ Հայաստան կրնայ դառնալ շրջանի կեդրոնական երկիրը: Պատասխանելով այն հարցումին, թէ ինչպէս կը հիմնաւորէ այդ գաղափարը, երբ Արեւմուտք ընդհանրապէս Վրաստանը կը նկատէ շրջանի կեդրոն, Թ.Ճոնզ ըսաւ, որ «եթէ սահմանները բացուին Վրաստանին տրուած այս նախապատուութիւնը պարզապէս պիտի դադրի»:

«Ես կրնամ ձեզի վստահեցնել, որ գործարարները շատ աւելի յարմար պայմաններ եւ իրենց նկատմամբ ցուցաբերուած աւելի լաւ վերաբերմունք կը գտնեն Հայաստանի, քան՝ այլ երկիրներու մէջ», ըսաւ բրիտանացի դեսպանը:

ՍՈՒՍՆԱ ԱԼՊԱՆԱՅԻ ԶԻՆԵԱԼՆԵՐՈՒՆ ԶԵՆՔԵՐԸ ՎԱՐ ԴՆԵԼՈՒ ԿՈՉ ԿՈՒՂՂԵ



Սոլաճա մամուլյ ստուկիսիճ ընթացքին:

ԹեթոՎՕ (ՄԱԿԵԴՆԻԱ), 27 (ՌՈՅԹԸՐԸ)։— Եւրոպական Միութեան ապահովութեան հարցերու պատասխանատու Նաւիլ Սոլաճա Երեքշաբթի օր Մակեդոնիոյ ԹեթոՎՕ քաղաքը այցելած է, ծագումով ալպանացի զինեալներուն կողմէ յարձակումներու վար զինեալ քաղաքական բեմին վրայ պայքարին ի խնդիր իրենց իրաւունքներուն:

Սոլաճա տեսակցութիւններ ունեցած է տեղացի ալպանացի քաղաքական ղեկավարներու հետ եւ Կեղոնական հրապարակին վրայ մամուլյ ստուկիս մը տուած է: Պատասխանելով հարցումի մը, թէ արդե՞ք քաղաքացիները վերջ գտած է, Սոլաճա ըսած է, թէ կը յուսայ, որ այդպէս է:

«Պայքանեան շրջանը կայունացնելու ճակատամարտը կը շարունակուի: Տակաւին ընելիք շատ բան ունինք», յայտնած է ան:

Սոլաճա արեւմուտքի բարձրաստիճան առաջին պաշտօնատարն է, որ ԹեթոՎՕ կ'այցելէր մակեդոնական ուժերուն է ալպանացի զինեալներուն միջեւ երկու շարաթ առաջ ծայր տուած բախումներու սկսումէն ի վեր՝ քաղաքին նայող բլուրներու յանջներուն:

ԹեթոՎՕ Երեքշաբթի օր հանդարտ էր: Սակայն մայրաքաղաք Սքոփիէի մէջ բնակիչները յայտնած են, թէ հեռուէն յսած են պայթումներ, որոնք կու գային ԹեթոՎՕի արեւելք գտնուող Քոսովոյի հետ Մակեդոնիոյ հիւսիսային սահմանին մօտ շրջանէ մը:

Ըստ պաշտպանութեան նախարարութեան մէկ պաշտօնատարին, զինեալները Կրաշանի գիւղին մօտ կրակած են բանակային զինքերու վրայ: Կրաշանի անցեալ շարաթ բնակիչներուն կողմէ զրուցուած էր, ոստիկաններու հետ ճակատամարտէ մը ետք եւ անկիւս շրջապատուած ու փակ կը մնայ տակաւին:

Մինչ այդ, սահմանակից Քոսովոյի մէջ, ՄԱԿի մէկ բանբերը յայտնած է, թէ նահանգին մէջ միջազգային ոստիկանութիւնը Մակեդոնիայէն եկած ծագումով 17 ալպանացիներ ձերբակալած է՝ ապօրինի կերպով գէնք եւ զինամթերք ունենալու յանցանքով:

ՄՈՍԿՈՒ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՊԱՇՏՈՆԱՏԱՐՆԵՐՈՒ ՅԱՆՁՆԵՑ ԱՐՏԱՔՍՈՒԵԼԻՔ ՉՈՐՍ ԱՄԵՐԻԿԱՅԻՆԵՐՈՒՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ

ՄՈՍԿՈՒ, 27 (ՌՈՅԹԸՐԸ)։— Ռուսիա Երեքշաբթի օր ամերիկացի պաշտօնատարներու տուած է անունները չորս դիւանագէտներու, որոնք տուն պիտի ղրկուին, ինչպէս նաեւ անիկա բացատրած է, թէ յաւելուելով ինչ քայլերու պիտի ղիմուի 50 ռուսեր տուն ղրկելու Ուաշինկթընի որոշումին իբրեւ հակադարձութիւն:

Արտաքին գործոց նախարարութեան մէկ հաղորդագրութիւնը յայտնեց, որ ամերիկեան դեսպանատան թիւ 2 դիւանագէտին՝ ձոն Օրտուէյի յանձնուած է չորս անուններուն ցանկը, որ չէ հրապարակուած:

Անոնք պէտք է 10 օրէն հեռանան Ռուսիայէն «գործունէութեան համար, որ իրենց դիւանագէտի հանգամանքին հետ չի համընկնիր», այլ խօսքով՝ լրտեսութեան յանցանքով:

Ուաշինկթըն յայտնած է, թէ մինչեւ Յունիս 46 ալ ռուսեր տուն պիտի ղրկուին՝ Պաղ Պատեռապմէն ի վեր լրտեսութեան կապուած ամէնէն ծանրակշիռ վէճին ծիրէն ներս:

Մոսկուա յայտարարած է, թէ իւրաքանչիւր ռուս դիւանագէտի արտաքսումի փոխարէն ամերիկացի դիւանագէտ մը պիտի արտաքսէ:

ԿՐԵՍԼԻՆ ՈՒԱՇԻՆԿՈՐԸ ԿԸ ՆԿԱՏԵ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՇԱՔԵԿՉՈՒԹԻՒՆԸ ԲԱԶԱԼԵՐՈՂ ԿՈՂՄ ՄԸ

Ռուսիա երէկ «անբարոյ» նկատած է ամերիկացի բարձրաստիճան պաշտօնատարի մը եւ Չէչէնիոյ ըմբոստ կառավարութեան մէկ պատուիրակին միջեւ տեսակցութիւն մը, որ տեղի ունեցած է մահացուական ահարումներէ քանի մը օր ետք: Ըստ Կրեմլինի, անջատողական պահանջներ կը կանգնին անոնց ետին:

Ռուսիա վայրույժով հակադարձած է անջատողական դեկլարարութեան արտաքին գործոց նախարար Իլիա Սիմտովի յայտարարութեան, թէ Ուաշինկթընի մէջ Երկուշաբթի օր ան տեսակցութիւն մը ունեցած է նոր անկախացած պետութիւններու առնչութեամբ ամերիկացի յատուկ խորհրդական ձոն Պէյրլիի հետ:

Պաշտօնապէս ողջունելով չէչէն պինեալներու պատուիրակը, ամերիկեան նոր վարչակարգը իրեն յատուկ «վճռակամութեամբ» ցոյց տուաւ, թէ ահաբեկչութեան դէմ միջապային պայքարին մէջ ինք ո՞ր կողմին թիկունք կը կանգնի, ըսած է Ռուսիոյ արտաքին գործոց նախարարութիւնը:

Տեսակցութիւնը տեղի ունեցած է մինչ երկու երկիրներուն միջեւ Պաղ Պատեռապմէն ի վեր լրտեսութեան կապուած ամէնէն ծանրակշիռ բանավէճը ընթացքի մէջ է: Երկու կողմերուն իւրաքանչիւրը 50 դիւանագէտ արտաքսած է հանձնարարութեան:

հանդէպ ոչ բարեկամական արարք մը» նկատած է եւ Ուաշինկթընը կեղծաւորութեամբ ամբաստանած:

«Արտաքին գործոց նախարարութեան այս քայլը ամէն ինչէ աւելի քաղաքական բնույթ մը ունի եւ յստակօրէն կ'արտացոլացնէ Ռուսիոյ եւ ահաբեկչութեան հարցին հանդէպ երկու շափ, երկու կշիռի քաղաքականութիւն մը», ըսած է ան:

Պէյրլիի հետ իր տեսակցութեանէն ետք, Ահմէտով Երկուշաբթի օր յայտնած է, թէ Չէչէնիոյ մէջ մարդկային իրաւանց մարզը եւ Մոսկուայի հետ բանակցութեանց կարելիութիւնները քննարկած է:

Ան յոռետեսութեամբ արտայայտուած է բանակցութիւններուն մասին, դիտել տալով, որ որեւէ ցուցանիշ չկայ, թէ ռուսերը պատրաստ են պատերապմին վերջ տալու:

ԻՐԱՆ ԲԱՐԵԿԱՐԳՉԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՆ ՄԸ ԿԸ ԶԵՐԲԱԿԱԼՈՒԻ, ԱՊԱ ԱԶԱՏ Կ'ԱՐՁԱԿՈՒԻ

ԹԵՀՐԱՆ, 27 (ՌՈՅԹԸՐԸ)։— Իրանեան պահանջողական ատեան մը ձերբակալած ու քանի մը ձերբակալած արձակած է խորհրդարանի բարեկարգչական ճակատի մէկ անդամը, հաղորդեց «ԻՐՆԱ» լրատու գործակալութիւնը Երեքշաբթի օր: Ծաթմէ Հաքիբաթմէն, որ նախագահ Մոհամէտ

հաճութեամբ զանազան կողմերէն կ'արձակուի, որոնք արձակուած են իրանական քաղաքական կողմէ: Զերբակալման հրահանգները չյայտնեց ղարտարանը, աւելցուց «ԻՐՆԱ»:

Հաքիբաթմէն քանի մը ժամ ետք ազատ արձակուեցաւ՝ խորհրդարանի նախագահին ու այլ երեսփոխաններու միջամտութեան յետոյ: Փոխ նախագահ Պեհգուտ Նապաւի ըսաւ, որ պատրաստ է ազատ արձակել Հաքիբաթմէնը՝ իր ծանօթ անձնաւորութիւն մը ըլլալու հանգամանքին պատճառով: Նապաւի ըսաւ, թէ զատարանը ի՞նչ պայմաններով ազատ արձակելու Հաքիբաթմէնը կր տանին, որպէսզի Հաքիբաթմէնի ղեկավարութեանը հարցերը չորհրդարանը լուծարէ:

Մոսկուայի հետ բանակցութեան մասին զուգընթաց ֆորումին աւելցուց, որոնք Արեւմուտքի գորակցութիւնը կը վայելեն, կ'ըսեն, թէ Մոսկուայի անկախութիւնը կը իրենց հրահանգները ֆորումին, ինչպէս նաեւ Մակեդոնիոյ եւ Սերպիոյ մէջ ծագումով ալպանացիներու մօտ անջատողական զգացումները:

ՄՈՆԹԵՆԵԿՐՈՅԻ ՄԷՉ ՊԻՏԻ ԿԱՅԱՆԱՅ ԱՆԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՆՐԱՔՈՒԷ ՄԸ

ՓԼՆԵԻ, 27 (ՌՈՅԹԸՐԸ)։— Մոնթենեկրոյի նախագահը՝ Միլո Ճուքանովիչ, Երեքշաբթի օր ինքնավստահ կերպով յայտնած է, թէ անկախութեան ի նպատակողմնորոշուած կուսակցութիւնները յաղթական դուրս պիտի գան Ապրիլի ընտրութիւններէն, ճամբան հարթելով հանրաքուէի մը: Սերպիայէն իր հանրապետութեան անկախացումին գծով:

Ճուքանովիչ ըսած է նաեւ, որ հանրաքուէն Յունիսին պիտի կայացնէ հակառակ Մակեդոնիոյ մէջ տեղի ունեցող բախումներուն եւ արեւմտեան մտաւախութիւններուն՝ պաշտօնեան աւելի լայնածիր տագնապի մը գծով:

Անոր ծրագրերին համաձայն, Եուկոսլաւիա եւ Մոնթենեկրո արտաքին եւ պաշտպանութեան նոյն քաղաքականութիւնը եւ նոյն դրամանիշը պէտք է ունենան, սակայն անոնք անկախ պէտք է ըլլան:

Ճուքանովիչ դիտել տուած է, թէ համոզուած է, որ նման նախաձեռնութիւն մը թէ՛ Մոնթենեկրոյի եւ թէ՛ Սերպիոյ ի շահ պիտի ըլլայ: Ան շեշտած է, որ եթէ Սերպիա մերժէ այս նախաձեռնութիւնը, «ասիկա չի նշանակեր, թէ մենք պիտի հրաժարինք»:

Ան կը խօսէր Փլենի մէջ միջազգային քաղաքականութեան մասին զուգընթաց ֆորումին աւելցուց, որոնք Արեւմուտքի գորակցութիւնը կը վայելեն, կ'ըսեն, թէ Մոնթենեկրոյի անկախութիւնը կը իրենց հրահանգները ֆորումին, ինչպէս նաեւ Մակեդոնիոյ եւ Սերպիոյ մէջ ծագումով ալպանացիներու մօտ անջատողական զգացումները:

ՍՈՒՐԻԱ ԴՐԱՄԱՏԵԱՅԻՆ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՕՐԵՆՔԸ ԵՐԿՈՒ ԸՆԲԱԹԷՆ ՊԻՏԻ ԱՄԲՈՂՉԱՅՈՒԻ

ԴԱՄԱՍԿՈՍ, 27 (ՌՈՅԹԸՐԸ)։— Սուրիոյ տնտեսական հարցերու փոխ վարչապետը յայտնեց, որ դրամատան ժողովի նոր օրէնքը պիտի ամբողջացուի յառաջիկայ երկու շաբթուան ընթացքին: Իսլամ Ռասաւ աւելցուց, որ մօտաւորապէս 50 օտար դրամատուներ հետաքրքրուած են Սուրիոյ մէջ կեդրոններ բանալու ծրագրերը:

Ռասաւ ըսաւ նաեւ, որ օրինագիծը արդէն իսկ խորհրդարան հասած է ու կը քննարկուի: Կը նախատեսուի, որ անիկա քանի մը շաբթիէն երկուշաբթի ու օրէնքի ուժ ստանայ: Ռասաւ աւելցուց, որ վաւերացումէն ետք, օտար դրամատուներ պիտի սկսին դիմումները ներկայացնել, որոնք պիտի ուսուանախորհի կեդրոնական Դրամատան կողմէ: Կեդրոնական Դրամատանը առաւելագոյնը երեք ամիսէն կու տայ արտօնագիր չնորհելու կամ մերժելու որոշումը:

«ԱՆԹԻԼԻԱՍԻ ՈՒԽՏԻ ՕՐ»Ը

Ս. Գրիգոր Լուսաւորիչի Մուտն ի Վիրապտօնին՝ «ԱՆԹԻԼԻԱՍԻ ՈՒԽՏԻ ՕՐ»ՈՒԱՆ առիթով, Անթիլիասի Մայր տաճարին մէջ տեղի պիտի ունենան հետեւեալ արարողութիւնները:-

● Եաքաթ, 31 Մարտ, առաւօտեան ժամը 9:30ին Ս. պատարագ:

Նոյն օրը, երկուշաբթի ժամը 7:00ին, հսկումի արարողութիւն՝ ի պատրաստութիւն յաջորդ օրուան ուխտաւորութեան:

● Կիրակի, 1 Ապրիլ, Սուրբ եւ անմահ պատարագ, որուն պիտի հետեւի Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉԻ ԱՁՈՎ զլիսաւորութեամբ սրբապան մատուցելու թափօրը՝ Անթիլիասի Մայրավանքի շրջափակին մէջ, մասնակցութեամբ միաբան հայերուն եւ քահանայից դասուն:

Պիտի պատարագէ եւ պիտի քարոյզէ ԳԵՐՇ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆ (Մուշնորդ Լիբանանի Հայոց թեմին)

Արարողութեանց եւ թափօրին պիտի հանդիսակցեն

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Ժամերգութիւն ժամը 8:30ին
Քատարագ ժամը 10:00ին
Քարոյզ ժամը 11:00ին
Ս. Աջերու եւ այլ մատուցելու թափօր ժամը 11:30ին

Կը իրաւիքները մեր ժողովուրդի բոլոր պաւակները՝ մասնակից դառնալու Ս. Գրիգոր Լուսաւորիչի Ուխտի Օրուան:

ԳԻՒԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ

ԼԻՊԻՈՅ ԵՒ ԻՐԱՆԻ ԴԵՄ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՊԱՏԻՄՈՒՅՆԵՐԸ ՁԵՋԵԼՈՒ ՀԱՐՅՈՎ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԲԱՐԻԻՂԻ «ՔՈՆՆՈՔՕ» ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ՝ ԼԱԻԱՏԵՍ

ՏՈՒՊԱՅ, 27 (ՌՈՅԹԸՐԸ)։— Ամերիկեան քաղաքացիական ծախսերի ընկերութիւններէն՝ «Քոննոքօ», կը վստահեցունէ, թէ Միացեալ Նահանգներ օր մը պիտի ջնջեն Լիպիոյ եւ Իրանի դէմ հատուածած պատժամիջոցները: «Քոննոքօ» լիբանոնցի ընկերութեան ղեկավարը ըսաւ, որ Իրանը կ'արձակուի իր ծանօթ անձնաւորութիւն մը ըլլալու հանգամանքին պատճառով: Նապաւի ըսաւ, որ պատրաստ է ազատ արձակել Հաքիբաթմէնը՝ իր ծանօթ անձնաւորութիւն մը ըլլալու հանգամանքին պատճառով: Նապաւի ըսաւ, որ պատրաստ է ազատ արձակել Հաքիբաթմէնը՝ իր ծանօթ անձնաւորութիւն մը ըլլալու հանգամանքին պատճառով:

Տանհրմ աւելցուց, որ բաւական լաւատես է եւ վստահ է, թէ երկար ժամանակի վրայ պատժամիջոցները պիտի մեղմանան կամ ջնջուին: Այդ պահուն ամերիկեան ընկերութիւնները աւելի պիտի ունենան ազատօրէն մասնակցելու յիշեալ երկիրներուն մէջ քարկղի եւ ուժանիւթի այլ մարգերու մէջ պայմանագրութիւնները ապահովելու համար:

«Քոննոքօ», որ նախկին

Հ. Կ. Մ. ՊՈՒՐԵ ՀԱՄՈՒՏ ԵՐԻՏԵՍԱՐԳԱԿԱՆ ՍՏԵՆՈՒԹՅՈՒՆ ԶԵՆՆԱԼՈՒԹՅՈՒՆ

ԿԸ ՑՈՒՑԱՂԻՎ ԿԻՏԵՕ ԵՐԻՉԸ

Ա.ՄԵՆԱՊԱՏԻԵ ԵՒ ԳԵՐԵՐՁԱՆԻԿ Տ. Տ. ՆԵՐՍԷՍ ՊԵՏՐՈՍ ԺԹ.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ՊԱՏՐԻԱՐԿ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՅՈՑ

Հայրապետական հայածէ Սուրբ Կատարագի, որ կատարեց Կատիկանի Սուրբ Պետրոս Մայր տաճարին մէջ, 18 Փետրուար 2001ին, Հայաստանի քրիստոնէացում 1700ամեակին առիթով:

Շինգաքթի, 29 Մարտ 2001 երկուշաբթի ժամը 7:30ին, Հ. Կ. Մ. ի սրահին մէջ:

ՀՐԱԻՐ

1700 ԱՄԵԱԿԻ ԾԱՄԲՈՎ ՈՒԽՏԻ ԹԱՓՕՐ ԴԵՊԻ ԱՆԹԻԼԻԱՍ

Գլխաւորութեամբ՝ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՐՇ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆԻ ԿԻՐԱԿԻ, 1 ԱՊՐԻԼ 2001, ԱՌԱՒՕՏԵԱՆ ԺԱՄԸ 7:30 (Մեկնումի վայր՝ Ս. Վարդանանց եկեղեցին):

Կ. ԲԱԼԱՅԵԱՆԻ ՀԱՄԱԶԱՅՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԱՆԿԱՅՈՒՆՈՒԹԻՒՆԸ ՎԱՏ ԱՆԴՐԱԳԱՐՁ ԿՈՒՆԵՆԱՅ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻՆ ՎՐԱՅ

Հայաստանի Ազգային ժողովի պատգամաւոր, Հ. Յ. Դաշնակցութեան անդամ Կիմ Բալայեան թղթակիցներուն ըսած է, թէ ներկայիս Լեռնային Ղարաբաղի դիմադրաւած քաղաքական անկայունութիւնը մեծապէս կը վնասէ Լեռնային Ղարաբաղի հարցին լուծումին:

«Լեռնային Ղարաբաղի մէջ պատերազմի վեթերաններու ձեռքարկութիւնը մեզ ահագանգի կը մատնէ», ըսած է ան: Կ. Բալայեան մասնաճորտարար նշած է, թէ ինք Սփիւռքի ներկայացուցիչներէն յսած է քննադատութիւններ այն մասին, որ «Հայաստան չի կրնար փրկել Ղարաբաղեան Շարժումի հերոսները (կ'ակնարկէ Հայաստանի նախկին վարչապետ Վազգէն Սարգսեանի եւ Լեռնային Ղարաբաղի նախկին պաշտպանութեան նախարար Սամուէլ Բաբայեանի), մէկը՝ ահաբեկիչներուն գնդակէն, իսկ միւսը՝ անարդար դատավճիռէ մը»:

Կ. Բալայեանի համաձայն, նաեւ մտահոգիչ է Լեռնային Ղարաբաղի անցուղարձեւումը նկատմամբ Հայաստանի ցուցաբերած անտարբերութիւնը: «Երեւան եւ Ստեփանակերտ պէտք է լրջօրէն մտածեն Լեռնային Ղարաբաղը ժողովրդավարութեան կղզիի մը վերածելու մասին: Այս մէկը կրնայ յաւելնել առաւելութիւն մը չնորոգել Լեռնային Ղարաբաղի եւ նոյնիսկ ազգել բանակցութիւններու գործընթացին վրայ», չեչտած է ան:

ՊԱՊԻՆ ԵՒ ՄՈՍԿՈՒԱՅԻ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ՝ ՀԱՒԱՆԱԲԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՁ

Ռուսական ծայրասփիւռէն ունեցած միացեալ ելույթի մը ընթացքին Մոսկուայի կաթողիկէ արքեպիսկոպոս Թատէոզ Գոնտրուսիեւիչ եւ ռուսական Ուղղափառ եկեղեցւոյ մեթրոփոլիթ Քիրիլ համաձայնած են, որ Յովհաննէս Պօղոս Բ. պապին եւ Մոսկուայի Ալեքսէյ Բ. պատրիարքին միջեւ տեղի ունենալիք աննախընթաց հանդիպումը պէտք է ըլլայ «խաղաղ պատմական եւ ոչ սոսկ փրոթոքոլային հանդիպում մը»:

Այս հանդիպումին առնչութեամբ Վատիկանի պաշտօնատարներ անպաշտօն կերպով ակնարկած են այն հաւանականութեան, որուն համաձայն, Յովհաննէս Պօղոս Բ. պապին եւ Ալեքսէյ Բ. պատրիարքին միջեւ հանդիպումը կը նայ տեղի ունենալ Հայաստանի մէջ: Հոռոմի եւ Մոսկուայի եկեղեցական ծիրէն դուրս գտնուելով՝ Հայաստան այս առումով կը նկատուի չէզոք երկիր մը, իսկ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին եւ Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ. լաւ յարաբերութիւններ ունին թէ՛ Վատիկանի եւ թէ՛ Մոսկուայի պատրիարքարանին հետ եւ, հետեւաբար, կրնան հանդիսանալ այս հանդիպումին իտէլ միջնորդը:

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԳՐՈՒԹԵԱՆ 300ԱՄԵԱԿԻ ՆՇՈՒՄ Ս. ԷԶՍԻԱԾԻՆԻ ՄԷՁ

24 Մարտին Ամենայն հայոց Գարեգին Բ. կաթողիկոսի նախագահութեամբ Ս. Էջմիածինի վեհարանի ռաճիճին մէջ տեղի ունեցաւ հանդիսութիւն մը՝ նուիրուած Վենետիկի Մխիթարեան միաբանութեան հիմնադրութեան 300ամեակին:

Հանդիսութեան ներկայ էին Էջմիածինի հոգեւորականներու դասը, Մխիթարեան միաբանութեան անդամներ, Վրաստանի եւ Արեւելեան Եւրոպայի հայ կաթողիկէ համայնքի առաջնորդ Ներսէս արք. Ներսիսեան, մտաւորականներ եւ հիւրեր:

Վեհափառը իր խօսքին մէջ ըսաւ, թէ Մխիթարեան հայրերուն եկեղեցասիրութեան եւ հայրենասիրութեան ոգին սնունդ առած է այն աղբիւրէն, ուրկէ ուժ ստացած են հայրենիքի մէջ ապրած ու ստեղծագործած մեր նախնիները: Ան իր համոզմունքը յայտնեց, որ երկիրի մէջ Մխիթարեան հայրերուն հոգիները ուրախ են, որովհետեւ իրականացած է տեսիլքը, Ս. Էջմիածինի վեհարանին մէջ Մխիթարեան հայրերը իրենց հոգեւոր եղբայրներուն՝ Ս. Էջմիածինի միաբանութեան հետ միասնաբար կը յիշատակեն անցեալի արժէքները:

Մխիթարեան միաբանութեան ընդհանուր քերթաչար Եղիա Մ. Վրդ. Քիլաղպեան իր երախտագիտութիւնը յայտնեց եւ մեծ պատիւ համարեց Ամենայնայնի մէջ կազմակերպուած հանդիսութիւնը: Ան մաղթեց, որ միաբանութիւնը Ս. Էջմիածինի հովանիին տակ կարենայ սատարել հայրենիքին եւ հայ ժողովուրդի լուսաւոր ապագայի կերտման:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՁ ԾԱԽՈՒԱԾ Է HIV ԺԱՀՐՈՎ ՎԱՐԱԿՈՒԱԾ ԱՐԻՒՆ

Հայաստանի մէջ հիւանդի մը, որուն անունը ցարգ չէ բացայայտուած, ծախուած է HIV ժահրով վարակուած արիւն:

Վարակուած արիւնը առնուած է կնոջ մէջ մը, որ իր հիւանդ զաւակին համար կարիք ունէր արեան փոխառուութեան: Արիւնին գինը վճարելու անկարող ըլլալով՝ կինը փոխարէնը ստուած է իր արիւնէն: Նախնական քննութիւնները ոչ մէկ մտահոգիչ արդիւնք տուած են: Հետագային ՄԻՏԱԻ Հանրապետական կեդրոնի քննութիւններէն ի յայտ եկած էր, որ կնոջ արիւնը վարակուած է HIV ժահրով:

Խնդրոյ առարկայ կինը լուր չունէր իր վարակուած ըլլալէն:

ՄԱՅՐ ՄԸ ԻՐ ԶԱԲԱԿԸ ԿԸ ՍՊԱՆԵՒ, ՈՐՈՎՆԵՏԵՒ... ՉԻ ԿՐՆԱՐ ԶԱՅՆ ԿԵՐԱԿՐԵԼ

«Սևար» լրագրող գործակալութիւնը կը հաղորդէ, որ Հայաստանի Աջոցք շրջանի քնակիչներէն 20ամեայ Կարինէ Աջեան, որ երկու զաւակի մայր է, սպաննած է իր մէկ տարեկան երեխան, որովհետեւ... չի կրնար կրակելու զայն:

Ըստ լրագրող գործակալութեան, Շիրակի մարզի դափնաբեր յայտնած է, թէ կինը յուսահատ վիճակի մէջ բարձով խեղդած է երեխան: Կարինէ Աջեան նախ փորձած է դէպքը ներկայացնել իր քննչական մասի, սակայն ներքին գործոց ուժերու աշխատակիցները, որոնք դէպքին վայրը ժամանած են, կասկածած են պարտաւարձի քնակիչ ըլլալէն եւ պահանջած են երեխային յետ մահու քննութիւն: Անկէ ետք կինը խոստովանած է, թէ ինք սպաննած է իր զաւակը: Աջեան յայտնած է, որ քանի մը ամիս առաջ ամուսինը զինք լքած է, որովհետեւ կսկսած է իր հաւաքարմուտքը: Նիւրբական ծանր եւ ցաւալի վիճակը զինք մղած է գործելու այս ոճի-րը:

Կ. Աջեան այժմ կը գտնուի հսկողութեան տակ: Ան դափնաբերութեամբ կ'անխամրածուած սպանութեամբ:

ԹԱՏՐՈՆ

ՄԵՆԱԿՈՒԹԵԱՆ ՎԵՐՁԻՆ ԿԱՆԳԱՌ ԶՈՒՍԱԲԵԿՈՂ ՅԱՆԿՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՆԴՈՒՆԴԸ



Լիբանանահայ բեմի յայտնութիւնը մը՝ Սարին Խաչիկեան

Դասական արուեստի յիշուած միջնորդը թատերական ներկայացումի մը ներկայ եղանք Հինգ շաբթի, 22 Մարտ 2001ի երեկոյեան Յակոբ Տէր Մելքոնեան թատերասրահին մէջ: Հ. Բ. Միութեան Հ. Ե. Ե. կերակցութեան «Վահրամ Փափագեան» թատերասրահին 40ամեակին նուիրուած էր ներկայացումը: Աշխարհահռչակ թատերադրութիւնը մէկ ծանր ու ճնշիչ միջոցով «Մենակութեան վերջին կանգառը»:

Դժուարին դերակատարութիւնը մը արդարեւ բեմագրիչը ճիշդ ընտրութիւն մը կատարած է նման դեր մը վստահելով անոր: Վերջապէս փոփոխական վիճակներ, անհասարակ լիակցութիւններ ստեղծող եւ այս այդ ամէնը բնական ընթացքին վերածող խաղարկութիւնը հանդիսականներուն ուշադրութիւնը կեդրոնացուց տրամին ընթացքին վրայ: Խորքին մէջ ծանր ու ճնշիչ միջոցով «Մենակութեան վերջին կանգառը» թատերադրութեան վերջին շնորհիւ բեմագրիչին վարպետութեան եւ դերասաններուն փորձառութեան:

«Վ. Փափագեան» թատերասրահին 40ամեակը արժանաւոր շուքով տօնելու համար Հայաստանէն հրաւիրուած տաղանդաւոր բեմագրիչ Երուանդ Ղազանճեանի վստահուած էր բեմագրութիւնը այս թատերակին: Հայաստանի Հանրապետութեան արուեստի վաստակաւոր պրոֆիչ, պետական մրցանակի դափնեկիր փրոֆ. Երուանդ Ղազանճեան իր շուքին համախմբած թատերասր բերուած արդիւնքները, որոնց կարգին՝ երեւանի թատերական ակադեմիայէն շրջանաւարտ դերասաններ, կարողացած է կարճատեւ ժամանակի մէջ պատրաստել այս ներկայացումը, որ յաջողութեամբ պատկուեցաւ:

Ողբերգութիւնը մըն է թ. Ուիլյամսի «Մենակութեան վերջին կանգառը», որ պատմութիւնն է կորուստի մատնուած ընտանիքի մը մոլորած մէկ աղկան՝ Պլանչի: Այս դերը մարմնակերպեց Սարին Խաչիկեան, ամենայն լրջութեամբ, դերին պահանջած ներքնութիւնները, յուզական թէզ գագազան պարունակող բնական ու հարագատ քննադատիչը:

Վարդան Սկրտիչեան եւ Սարին Խաչիկեան դէմ դիմաց «հաշուեյարդար»

պար մը՝ Ղաչանոտ, դիւրագրիչ, նախանձոտ եւ վայրագ տրամադրութիւններով: Իր դերին պահանջած խիստ, անփափական կատ, կոպիտ ամուսինը մարմնակերպեց՝ ստեղծելով հակասութիւն մը իր յայտնական փափակ կատ, համեստ ու խոնարհ, հասարակ շուքով կնոջ:

որով, որոնք դրացնութեամբ կ'ապրին Գովալքի ընտանիքին հետ: Խաղարկութեան իրենց մասնակցութիւնը բերին, կարճատեւ յայտնութեամբ, երիտասարդի մը դերով՝ Սագո Ինճիլբոշյանեան, բժիշկի դերով՝ Ժաւր Խաչիկեան: Ինչ կը վերաբերի բեմագրութեան նպատողութեան գործօններուն եւ միջնորդ ստեղծող միջամտութեան, անոնք սպաւորեցին իբրեւ միջավայր՝ բնակարանային յարգարանք եւ երգ ու դեղատոմար: Տեքստի յղացում՝ Գրիգոր Սահակեանի, իսկ երաժշտութեան ձեւաւորումը՝ Սուրէն Ծահլերտեանի:



Բուռն բախումի տեսարան մը


ըլլալով: Թատերախաղին հերոսուհին էր ան, որ մօտեկու ժամ տիրապետեց բեմին՝ իր կերպարին պահանջած բնական կամ գարտուղի տրամադրութիւնները դրսեւորելով: Ան օժտուած է ձայնային հնչեղութեամբ, իր հերոսին մորթին մէջ մտնելու գիտակցութեամբ:

դիմաց: Այս վերջինին դերը յաջողութեամբ մարմնակերպեց Արփի Աւետիքեան (Սթելլա): Տրամին չորրորդ հեղինակաւոր ներկայութիւնը եղաւ Յարութի Թորոսեան (Միշ), որ ընտանիքի հասարակ ուղղութիւնը, ապա՝ սիրահարը Պլանչի գիտակցութեամբ:

Ինչ կը վերաբերի բեմագրութեան նպատողութեան գործօններուն եւ միջնորդ ստեղծող միջամտութեան, անոնք սպաւորեցին իբրեւ միջավայր՝ բնակարանային յարգարանք եւ երգ ու դեղատոմար: Տեքստի յղացում՝ Գրիգոր Սահակեանի, իսկ երաժշտութեան ձեւաւորումը՝ Սուրէն Ծահլերտեանի:

Կարելի չէ թափանցել մանրամասնութիւններուն մէջ՝ հոգեբանական խորունկ հարցեր արծարծող այս տրամին, որուն մեկնաբանութիւնը կը վերաբերի անշուք զանգի սատեսին: Թէ ան ինչ «դաս» քաղեց ու տարաւ ՇԻՎԱԿՈՒՄՏ Ծարք՝ էջ 10

ԿՈՍԻՏԱՍԻ ԱՐՁԱՆԸ ՓԱՐԻՉԻ «ՔԱՆԱՏԱ» ՀՐԱՊԱՐԱԿԻՆ ՎՐԱՅ



Արձանին մանրակերտը

Հայկական Յեղասպանութեան զոհերուն յիշատակը յաւերժացնելու համար Փարիզի «Քանատա» հրապարակին վրայ պիտի տեղադրուի Կոստաս Վարդապետը ներկայացնող յուշարձան մը: Անոր ստիւգնէն դուրս եկող մանուկը կը խորհրդանշէ զոհուած ժողովուրդին վերածնունդն ու յարութիւնը: Խաչքարը կը ներկայացնէ հայերու ինքնութիւնը եւ հաւաքական յիշողութիւնը: Յուշարձանը իր պատուանդանով մօտ 6 մետր բարձրութիւն պիտի ունենայ, պիտի ըլլայ խորանարդաձեւ եւ չորս կողմերու պատերուն վրայ քանդակներ պիտի կրէ: «Քանատա» հրապարակին մայրը առաջին կողմի քանդակը պիտի նուիրուի Կոստասին եւ մէկուկէ միւսին գոհերուն, իսկ Ալպերթ Ա. փողոցին մայրը երկրորդ կողմը՝ Ֆրանսուայի համար զոհուած հայ մարտիկներուն: Սէն Գեորգի մայրը երրորդ եւ Ալմա փողոցին մայրը չորրորդ կողմերուն վրայ պիտի քանդակուի Կոստասի ստեղծագործութիւններէն հատուած մը եւ ուրիշ հայերէն գրութիւն մը: Յուշարձանին հեղինակը Դաիթ Երեւանցին է:

ՀԱՅՎԱԿԱՆ ՇԱՐՔԱՊԱՏԿԵՐԻ ԴՆԱՄԵԱՅ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ԳԻՐՔ

Հայկական Շարժապատկերի Մասնագէտներու եւ Լրագրողներու Միութեան նախաձեռնութեամբ, վերջերս հրատարակուեցաւ «Հայկական շարժապատկեր. 1924 - 1999 լիակատար քաթալոկ» աշխատասիրութիւնը, որ առաջին անգամ ըլլալով կը ներկայացնէ հայկական շարժապատկերի ԴՆԱՄԵԱՅ արտադրութիւնները: Հրատարակութիւնը կը ներառէ Հայաստանի մէջ նկարահանուած բոլոր ֆիլմերը, որոնք քաթալուած են ըստ տեսակի արտադրութեան թուականի: Անոնց մասին տրուած են մանրամասն տեղեկութիւններ: Գրքը ունի նաեւ ֆիլմերու անուանումներու «Արեւնական ցանկ» եւ ստեղծագործողներու «անուանացանկ»: Այս աշխատասիրութիւնը հրատարակուած է երեք լեզուներով (հայերէն, ռուսերէն, անգլերէն) եւ արձանագրուած է նաեւ համակարգչային սկանաւակի վրայ: Միաժամանակ ան տեղադրուած է հայ շարժապատկերի Ծարք՝ էջ 10

ՀԱՅ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԸ ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵՆ ԸՆԿՂՄԱԾ «ՔՈՒՐՍՔ» ՍՈՒՉԱՆԱԻՐ ՎԵՐ ՀԱՆԵԼՈՒ ԾՐԱԳԻՐ ՄԸ

Օգոստոս 2000-ին ընկղմած ուսումնական կորիզային «Բուրսք» սուզանաւոր Պարենց ծովու յատակէն մակերես հանելու նպատակով Հայաստանի գիտնականները կազմած են յատուկ ծրագիր մը: Անոնց ծրագրին հիմնական առանձնառայությունները իրենց արջն է, որ անոր գործադրումը շատ աւելի փասն է, քան՝ ցարդ ներկայացած նմանօրինակ ծրագրերը:

Ուսումնականները տեղեկացուցած են իրենց Հայ պաշտօնակիցներուն, թէ «Բուրսք» մակերես հանելու իրենց ծրագիրը պիտի քննարկուի այլ ծրագրերէն:

Այս առնչութեամբ Հայաստանի Գիտութիւններու Ազգային Ակադեմիան կը յայտնէ, թէ՛ «անկասկած է, որ Հայ գիտնականներուն ներկայացուցած ծրագիրը պիտի գործադրուի կամ ոչ, գիտական մարզին մէջ Հայ ուսումնական գործակալութեան այս օրինակը կարելուք քայլ մըն է մարդասիրական առումով»:

ԱԼՊԷՐԹ ՊՈՅԱՃԵԱՆ 200 ՀԱՁԱՐ ՏՈԼԱՐ ԿԸ ՆՈՒՒՐԷ «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ

«Հայաստան» համահայկական հիմնադրամի Միացեալ Նահանգներու մասնաճիւղը կը հաղորդէ, թէ քաղաքացիական պատերազմի ժամանակահատիկէն սկսած Հայաստանի 200 հազար տղար նուիրած է հիմնադրամին: Այս նուիրատուութիւնը պիտի օգտագործուի Հայաստանի մէջ մշակութային եւ մարդասիրական ծրագրերը իրականացնելու համար:

Այլեւ՛ Պոյաճեան նախագիտ, տարբեր առիթներով, նուիրատուութիւններ կատարած էր Համահայկական Ողիմպիական խաղերու կազմակերպման, «Անանիա Շիրակացի» ուսումնարանին եւ այլ մարդասիրական ու ընկերային ծրագրերը իրականացնելու համար: Ան կէս միլիոն տղար նուիրած էր «Հայաստան» համահայկական հիմնադրամի 1999 թուականի քննիչներին:

ԱՊՐԻԼԵԱՆ ԵՂԵՈՒՆ 86ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻՅՈՎ

ՕՏԱՆ ԴՈՒՐԵԱՆԻ ԴԵԿԱՎԱՐՈՒԹԵԱՄԲ «ԼԱՐՔ» ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵ «ՌԵՔՈՒԻԷՄ»Ը

Հայկական Յեղասպանութեան 86ամեակը ոգեկոչելու համար «Լարք» երաժշտական խմբաւորումը հրաւիրած է նշանաւոր յօրինող եւ խմբավար Օտան Դուրեանը՝ ղեկավարելու «Լարք» երաժշտական ընկերակազմին: Սիմֆոնիկ նուագախումբն ու երգչախումբը, Վերտիի «Ռեքուիեմ»-ը ներկայացնելու համար:

Մենակատարները պիտի ըլլան Քալին Իսպիրեան (սոփրանո), Մակոս Մկրտիչեան (մեցսո սոփրանո), Եղիշէ Մանուչարեան (թեմոր) եւ Սերգէյ Բարսեղեան (պաս):

Համերգը տեղի պիտի ունենայ Երկուշաբթի, 23 Ապրիլին, Լոս Անճելեսի երաժշտական կեդրոնի «Տորոնթո 25»-ում փակուելու համար:

ՄՇԱԿՈՅԹԻ ԵՒ ԳԻՏՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԵՐՈՒ ՔՆՆԱՐԿՈՒՄ՝ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ ՀԵՏ

22 Մարտին, Լեռնային Ղարաբաղի նախագահ Արկարի Դուրեանեան հանդիպումներ ունեցած է երկրի մշակութի, երիտասարդութեան հարցերու եւ մարմնակրթութեան նախարար Արմէն Սարգսեանի ու կրթութեան եւ գիտութեան նախարար Համլէթ Գրիգորեանի հետ: Հանդիպումներուն ընթացքին քննարկուած են Հայաստանի մէջ քրիստոնէութիւնը պետական կրօն հռչակման 1700ամեակին առիթով Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան մէջ կայանալիք տօնակատարութիւններուն առնչուող հարցեր: Նախարարները նախագահ Արկարի Դուրեանեանին ներկայացուցած են իրենց նախարարութիւններուն հրատարակած հարցերը եւ աշխատանքներուն վիճակն ու ընթացքը:

Հայաստանի կառավարութիւնը որոշում կայացուցած է HIV Ժահրով վարակուած եւ ՍԻՏԱէ տառապող օտար հիւանդներուն մէջ Էրուճան նպատակով երկր մուտք գործելու կարգի մասին:

Ըստ որոշումին, ՍԻՏԱով հիւանդները պէտք է դիմեն իրենց երկիրներուն մէջ գտնուող Հայաստանի դեսպանատուները կամ հիւպատոսարանները՝ բուժման նպատակով Հայաստան մեկնելու արտօնութիւն ստանալու համար: Անոնք պէտք է ներկայացնեն նաեւ առաւելագոյնը կերտու շարք առողջ երատուած բժշկական քննութիւններու փաստաթուղթը:

ՎԻԵՆԱՅԻ Ս. ՀՈՒՓՍԻՄԻ ԵԿԵՂԵՅԻՈՅ ԿՈՂՔԻՆ ԳՏՆՈՒՈՂ ՀՐԱՊԱՐԱԿԻՆ ՎՐԱՅ ԿԸ ՏԵՂԱԳՐՈՒԻ ՀԱՅԱՄԱՆ ՅՈՒՇԱՐՁԱՆ ՄԸ

Հայաստանի մէջ քրիստոնէութեան պետական կրօն հռչակման 1700ամեակի առիթով, Հայ առաքելական եկեղեցւոյ Աւստրիոյ համայնքը նախատեսած է յուշարձան մը տեղադրել Վիեննայի Ս. Հուսիփի մէջ եկեղեցւոյ կողքին գտնուող հրապարակին վրայ: Համայնքը փափաքած է, որ յուշարձանին նախագիծը պատրաստուի Հայաստանի մէջ՝ Հայ ստեղծագործողներու կողմէ:

Երեք մեթր բարձրութեամբ յուշարձանին թեման քրիստոնէական պիտի ըլլայ, իսկ նիւթը՝ մետաղ կամ քար եւ պիտի ունենայ հայերէն ու գերմաներէն գրութիւններ:

Լաւազոյն նախագիծը ընտրելու նպատակով մրցում յայտարարուած է, որուն մասնակցելու դիմում ներկայացուցած են եօթանասուն հայրեր եւ քանդակագործներ եւ ճարտարագետներ:

Յուշարձանի ընտրութեան առաջին բաժինը տեղի ունեցաւ Հայաստանի Նկարիչի տան ցուցասրահին մէջ, ուր դատական կազմը որոշեց նախագահն է Նկարիչներու միութեան նախագահ Կարէն Աղամեան, ընտրեց լաւագոյն հինգ գործերը: Ընտրուած աշխատանքներուն հեղինակներն են՝ Թագեւոս Գեորգեան, Աշոտ Բաղդասեան, Աշոտ Աղամեան, Գեորգի Բաղդասարեան եւ Սամուէլ Ղազարեան: Այս նախագիծերը պիտի դրական վիճենաւ, ուր տեղի ունենան յանձնարումը վերջնական ընտրութիւնը պիտի կատարէ եւ որոշէ լաւագոյն գործը: Մնացեալ չորս նախագիծներուն հեղինակները պիտի ստանան 300ական տղար պարգեւ, իսկ առաջին մրցանակակիրին հետ համաձայնագիր պիտի կնքուի:

Ըստ միութեան նախագահին, Եւրոպայի մէջ փափաքելի է ունենալ քարէ (տուֆէ) արձան, որ աւելի հետաքրքրական պիտի ըլլայ, քան պրոնզը: Կ. Աղամեան նշեց որ մրցումին մասնակցող որեւտագէտներուն գործերուն մէջ նկատուի է նոր մտածելակերպ, նոր արտայայտութեան ձեւերով եւ դրսեւորմաներով:

Յուշարձանը պէտք է պատրաստ ըլլայ մինչեւ Սեպտեմբեր:

ՉՈՅԳ ԱՇԽԱՐՀԱՐԱՐՆԵՐՈՒ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆ

Հայաստան - Սփիւռք յարաբերութիւնները ընդհանրապէս եւ լեզուական տեսակէտէ երբեք այսքան յաճախակի եւ խիտ չէին եղած: Ծամբորդութիւններ: Տեղեկութիւններու արագ շարժումները՝ առանց գոման եւ գրաբնութեան: Յարաբերութիւններու մէջ որակի տարբերութիւն մը կայ: Սփիւռքի հայը հայրենիք կ'երթայ զգացական պատճառներով, կուտակուած հարցանախարութեամբ: Հայաստանի հայը արտասահման կու գայ իրրեւ գրասարքի, առեւտրական, գործով կամ պարագայէ՝ հոն հաստատուելու համար:

Հետեւեալը՝ դժոյխ յանդիման կը գտնուիք զոյգ աշխարհաբարներու եւ հարազատ ուղղագրութեան ու միասին դրացնութեան: Երեւոյթը ազգային ընդհանուր քաղաքականութեան մը ծիրին մէջ ցարդ չքննուեցաւ, ինչ որ պատճառ կը հանդիսանայ դիրքերու կարծրացման եւ նուազագոյն քննադատութիւնը կը դիմաւորուի իրրեւ մարտահրաւիր կամ գրաւութիւն: Ոմանք կը հակադրեն ենթադրեալ գերակայութեան դիրքերէ:

Չգացական հայրենասիրութեան ուղեկանին մէջ ընտելուած՝ դասական Սփիւռքը, Շարքի մը Հայաստան այցելելէ ետք, կը տեսնէք որ կը սկսի արեւելահայերէն բարբառի, աղճատ լեզուով, առաջին հերթին կապելով անոր օտարաբանութիւնները: Սփիւռքի հայկական մամուլը, հարկ է խոստովանիլ, տառապելով գրողի պակասէ, յաճախ խնայողութեան ու ծուլութեան պատճառով, իր էջերուն վրայ սաւանի պէս կը փռէ Հայաստանեան թերթներու արտասպումները՝ փոխելով միայն ուղղագրութիւնը, ոչ միայն: Կը կարողաք եւ ուրեք ձեռք կու տաք, թէ ի՞նչ կը բերեն այդ գրութիւնները Լիոնի, Այնճարի կամ Ֆրեզոյի հայերուն: Այդ ընտրութիւնը նորմութիւն կատարողները կը խորհին որ այդ էջերով իրենց կողմի լողացքին ջուր կը բերեն, ըստ իրար տուած են ընաւ, թէ իրենց ընթերցողներու ո՞ր տակուսը կը կարողայ այդ յաճախ երկարապատում յօդուածները եւ ինչ կը քաղէ մանաւանդ, Հայկական թերթերը երբ աչքէ կ'անցընէք, կը դարձիք անդրազանալէ, որ անոնք այս կամ այն քաղաքին կամ երկրին մէջ լոյս կը տեսնեն: Զարմանալի կրնայ թուիլ: Ներկայիս աւելի արտայայտիչ են օտարակերպ հայկական հրատարակութիւնները, քանի որ պարտադրաբար յիշուած դիւրութիւններէն, հետեւաբար՝ մեղանշումներէն գերծ են:

Այս երեւոյթին չենք հանդիպիր հայաստանեան մամուլի պարագային, քանի մը պատճառներով: Հայաստանեան մամուլը չ'արտասպար, արտասահմանի մէջ իր թղթակիցները ունի յաճախ, հեռատեսիլ եւ թերթեր, որոնք իրենց հայեցողութեամբ եւ արտայայտութեան եղանակով կը խօսին, կը գրեն եւ կը մեկնաբանեն: Հազուադէպ պարագաներու, արեւմտահայերէնով յօդուած լոյս կը տեսնէ, չըջան մը ճիշտ եւ արեւմտահայերէնով գրողներու յօդուածները հարազատ մեքուպեան ուղղագրութեամբ լոյս ընծայելու, բայց փորձը չ'նշասպառ եղաւ: Աւելի՛ն. հայաստանեան թերթին տրամադրուած արեւմտահայերէնով եւ մեքսիկայեան ուղղագրութեամբ գրուած յօդուածը կը վերջնապէս արեւելահայերէնի եւ կը հրատարակուի խորհրդային ուղղագրութեամբ, առաւել՝ յապաւումներով, առանց հեղինակին կարծիք առնելու, տգեղութիւն՝ որուն ուրիշ անուններ եւ կարելի է տալ, բայց ի՞նչ բանի կը ծառայէ ապարդիւն մնալու դատապարտուած քանաւժէք: Իսկ ծիծաղելին կը սկսի եւ կ'աւարտի երբ արեւմտահայերէն գրուած եւ յապաւումներով արեւելահայերէնի վերածուած յօդուած լոյս կը տեսնէ սփիւռքեան մամուլին մէջ: Ընթերցողը չ'անդրադառնար, իմացողներն ալ նման գայթակղութեան կափարիչը չեն վերցնիր:

Պարզ. այս երեւոյթները կը վկայեն այն մասին, որ Հայաստան եւ Սփիւռք, լեզուի եւ լեզուամտածողութեան ազգային քաղաքականութիւն գրութիւն չունին, այդ գծով մտահոգութիւն չկայ, առաջին հերթին լեզուներու ցուցակէն դուրս է ան, մէկ ձեռքի մատներուն վրայ կարելի է համբել անունները անոնց, որոնք կը հաւատան լեզուի իւրապատուի ուժին, իրրեւ լեզուամտածողութիւն, այսինքն՝ հայու իրաւ իրեւութեան հիմնարար: Երբայանգումը կ'ըլլայ այն, որ կը ստեղծուի լեզուական խառնիճադան, եւ ինչպէս քաղիֆորնիացի հայրենակից մը սրտացուութեամբ կ'ըսէր, ծնունդ կ'առնէ գրական նոր գաւառաբարբառ մը, մէկ սերունդի համար: Յետո՛ւ... Ձրանսացին այնքան դիպուկ կերպով կը կրնայ՝ ինձմէ ետք ըրհեղը...

Այս խնդիրները միայն մշակութային չեն, այլ՝ էապէս ազգային-քաղաքական, անոնց կարելի չէ մօտենալ նեղլիկ աթոռակային շահերու տեսանկիւնէն կամ պարզապէս թեթեւօղիկութեամբ: Իսկ հրապարակային վիճարկման եւ քննադատութեան քաղաքականութիւնը, ընթերցող կամ համակիր չկորսնցնելու մտտութեամբ, մեղանշում է ազգի ոգիին հանդէպ:

3. ՊԱՆԵԱՆ

կնքուի բժշկական կեդրոնին եւ հիմնարկին միջեւ, որմէ ետք պիտի ճշդուի հիւանդին եւ բժշկական կեդրոնին պարտաւորութիւնները եւ իրաւունքները:

Հայաստան մտնելէ ետք միայն եւ սահմանուած ժամանակը հիւանդը պիտի գտնուի բուժում կատարող հիմնարկին պատասխանատուութեան տակ, եւ թէ՛ որեւէ ձեւով խախտուի յիշեալ որոշումները, ապա Հայաստանի օրէնսգրութեան համար հիւանդները Հայաստան ուղղարկուի հիմնարկը: Հիմնարկին կողմէ անձեր պիտի ընկերակցին հիւանդին իր կեցութեան ընթացքին: Հայաստանի մէջ յատուկ քննութիւններու ենթարկուելէ ետք համաձայնագիր մը պիտի

ԹԵ ՀՐԱՆԻ ԵԿԵՂԵՅԻՆԵՐԸ՝ Ս. ԹԱԴԻՈՍԻՑ ՄԻՆՉԵԻ Ս. ՎԱՐԴԱՆԱՆՑ

Երեւի Թեհրանի ընկերային-մշակութային խնդիրներն ուսումնասիրողները համար եւս յայտնութիւն լինի այն, որ դաճարների Ծաթճալի շահի իշխանութեան ժամանակ «Շահի» (ներկայիս «Իմամի») մզկիթի կառուցմանը գրեթէ զուգընթաց Թեհրանում կառուցուել է հայկական առաջին եկեղեցին, որը համարուում է Թեհրանի պատմական յուշակոթողները մէկը:

Եկեղեցին կոչուում է Ս. Թադէոս ու Բարթողիմէոս եւ գտնուում է Թեհրանի հարաւարեւելքում: Եկեղեցին կառուցուել է 1808 թուականին (որոշ վկայութիւններով աւելի վաղ) հայկական 10 ընտանիքի կողմից, որոնք Ծաթճալի շահի հրամանով Սպահանից եկել էին Թեհրան՝ արքունի պալատների (ներկայիս՝ Կոլեսթան պալատ) ապակիները պատրաստելու համար: Հիմնական կառուցողները եղել են վարպետներ Ուայիկ ու Յարութիւնը, որոնք թաղուած են եկեղեցու մուտքի մօտ: Շուրջ 320 քառակուսի մետր տարածք զբաղեցնող եկեղեցու գաւթի իրրեւ այն ժամանակ առկայ առաջին ու միակ տարածք ծառայել է որպէս պանթէոն Թեհրանում վախճանուած քրիստոնեաների համար: Օտարերկրեայ գաղմաթիւ քաղաքական ու մշակութային գործիչներ, մասնաւորապէս՝ Իտուստանի Անգլիայի դեսպանները, Վրաստանի արքայազնը, անգլիացի գրող Ուոլթըր Սքոթի որդի Ջարլզ Սքոթը, Իրանում Անգլիայի թագաւորութեան յատուկ պատուիրակ եւ նախարար Ջարլզ Ալիսընը, բժշկապետ Տաւուսխանը եւ Իտուստանի դեսպան Կրիպտիտովը հողին են յանձնուել այս եկեղեցու: 1970 թուականին, երբ ներկուում էին եկեղեցու պատերը, մակերեսի զանի շերտը թափուել է եւ ի յայտ է եկել պատերի նախնական տեսքը եւ նրանցում եղած պատկերները: Պատերուում է ծաղկանա՛ն՝ ծաղկով, թփով եւ թուռային նման թուռայիններով, որոնց ներկն ստացուել է բոյսերի նիւթերից: Իսկ տապանաքարերին պատկերուած մարդկանց հագուստը պատկանում է դաճարների ժամանակաշրջանին: Ներկայումս ամիսը մէկ անգամ, իւրաքանչիւր ամսուան առաջին Ուրբաթ օրը եւ տարին մէկ անգամ՝ եկեղեցուն նուիրւած օրը, Ս. Թադէոս եւ Բարթողիմէոս եկեղեցուն տրուում է պատարագ:

Դոկտոր Հիւսէյն Քարիմանն էլ իր «Թեհրանը նախկինում եւ այժմ» գրքում անդրադառնալով Ս. Թադէոս եկեղեցուն գրում է, որ Ալի Իմամջիլ սրբալիայի մօտ կառուցուած եկեղեցին Թեհրանի ամենահին եկեղեցին է: Վկայակոչելով հնագէտ, «Թեհրանի պատմական կոթողներ» գրքի հեղինակ Մուսթաֆաւիհին՝ Հիւսէյն Քարիմանը գրում է, թէ շուկայի արեւմտեան թիւ մօտ, «Հայոց» կոչուող փողոցում, դաճարների Ծաթճալի շահի ժամանակներից մնացած էլ եկեղեցի կայ, որի անունը Ս. Թադէոս է: Վանահայր Դեւոնդ քահանայ Իտուստանեանի (1941-1951) վկայութեամբ, եկեղեցին կառուցուել է Շահ Աբբասի օրօք, որը սուեալ վայրում բնակեցրել է հայերին եւ մօտակալքում նրանց համար կառուցել է այս եկեղեցին: Թե՛ թէ այս խօսքերը ճշմարիտ են, ապա Շահ Աբբասի ժամանակաշրջանին եկեղեցին Ծաթճալի շահի օրօք փոփոխութեան է ենթարկուել եւ ներկայիս չ'ենք կառուցուել է նրա տեղում:

Թեհրանի երկրորդ հնագոյն եկեղեցին Սուրբ Գեորգն է, որը գտնուում է Ղաւամոյցից շուկայի մօտակալքում, Տարխնգահ փողոցում եւ տեսքով որոշակիորէն աւելի մեծ ու գեղեցիկ է թուում, քան Ս. Թադէոսը: Ս. Թադէոս եւ Ս. Գեորգ եկեղեցիների պատասխանատու Ալպէրէթ Յովսէփում նշում է, որ Ս. Գեորգ եկեղեցու ներկայացման գրքովում իրրեւ եկեղեցու շինարարութեան թուական յիշատակուում են 1790-95 թուականները: Այս ղէ պարում Ս. Թադէոս եկեղեցին, որ աւելի հին է, պէտք է կառուցուած լինի նրանից աւելի վաղ եւ ամենայն հաւանականութեամբ Ս. Թադէոս եկեղեցու կառուցման յիշատակում 1808 թուականը ճիշդ չէ:

Թեհրանի շայոց թեմի հասարակայնութեան հետ կապերի պատասխանատու պարոն Քէշիշեանի վկայութեամբ, ներկայումս թեմի հովանաւորութեան տակ են գտնուում Թեհրանի 8 հայկական եկեղեցիները, որոնցից երեքը՝ Միխայր, Ս. Թադէոսը եւ Ս. Գեորգը մայրաքաղաքի ամենահին եկեղեցիներն են: Ըստ նրա, Միխայր եւ Ս. Թադէոսը երկու հարիւր տարուան պատմութիւն ունեն, իսկ Ս. Գեորգը 140 տարեկան է: Երեք եկեղեցիներ ունեն շուրջ 50ամեայ վաղեմութիւն, իսկ երկու հարիւր եկեղեցիներ էլ կառուցուել են իսլամական յեղափոխութեան յաղթանակից յետոյ:

Ասորիները Թեհրանում 6 գործող եկեղեցի ունեն, որոնք կառուցուել են վերջին 50 տարիներին: Թեհրանի Ֆրոսաթ փողոցում գտնուող ասորիների եւ քաղցի կողմերի «Յովսէփ» եկեղեցու հայր, քահանայ ժողջֆի վկայութեամբ, մայրաքաղաքի տարբեր փողոցներում վկայութեամբ, մայրաքաղաքի տարբեր փողոցներում են «Արեւելեան ասորական», «Ասորի եղբայրների», «Աստուածաշնչեան», «Ասորական», «Տէր Թոմայի» եւ «Սուրբ Մարիամի» եկեղեցիները:

Թեհրանի Եկեղեցիների մէկ այլ խումբ՝ «Աստուածաշնչեան», «Ղովառապետական» եւ այլ անուանումներով, համարուում են քրիստոնեայ հաւատացեալների աղօթատեղի, որոնցից ամենահինը Սիէ թիր փողոցում գտնուող, 1876 թուականին կառուցուած «Աստուածաշնչեան» պարսկալեզու եկեղեցին է, որը փաստօրէն հայկական եկեղեցիներից յետոյ ամենահնագոյնն է:

Ընդհանրապէս Թեհրանում գործում են 35 եկեղեցիներ, որոնք մեծ մասամբ տեղակայուած են քաղաքի կենտրոնում: Բացի հայկական 8 եւ ասորական 6 եկեղեցիներից, մնացածը պատկանում են քրիստոնէութեան այլ ուղղութիւններին եւ ինքնուրոյն կատարում են կրօնական ծիսակատարութիւնները:

Երեւանում Իրանի Իսլամական Հանրապետութեան դեսպանութեան հասարակայնութեան հետ կապերի բաժին

«Հայոց Աշխարհ»

ՈՐՈՇՈՒՄ՝ ՍԻՏԱՆՎ ՎԱՐԱԿՈՒԱԾ ՀԻՒԱՆԴՆԵՐՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆ ԲՈՒԺՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵԼՈՒ ԿԱՐԳԻՆ ՄԱՍԻՆ

յին, տեղեակ պիտի պահարտաքին գործոց նախարարութիւնը, որ պիտի տայ մուտքի արտօնագիր: Մերժուելու պարագային, ուղղակի պիտի տեղեկացուի դիմում ներկայացնողը: HIV Ժահրով վարակուած եւ ՍԻՏԱՆով տառապող օտար քաղաքացիները եւ քաղաքացիութիւն չունեցող անձերը տուեալ երկրին մէջ պիտի ստորագրեն

ՀԱՅ ԴԱՏ ԵՒ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՆԿԵՂԾ ԱՌԱՋԱՐԿ ԹՈՒՐՔԻ ՄԸ ԿՈՂՄԵ՝ ԱՂԹԱՄԱՐԻ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԳԾՈՎ

Առիվ պատասխան իմ շարժական յոգ-
 աններուն՝ ես շատ մը նամակներ կը
 ստանամ հայ անհատներէ, որոնք ընդ-
 հանրապէս դրական մօտեցում կը ցուցաբերեն:
 Սակայն թուրքերու եւ ազերիներու կողմէ ին-
 ծի յղուած են նամակները աւելի տարբեր են:
 Անոնք կը կարգան համացանցին վրայ հրապար-
 ակուած իմ յօդուածներս եւ անպարկեշտ նա-
 մակներ կը դրկեն ինծի:

Քանի մը շարժաթ առաջ ես շատ տարօրինակ
 նամակ մը ստացայ թուրքիայէն՝ գրուած թուրք
 նախկին երեսփոխանի մը կողմէ: Հեղինակը ոչ
 միայն անպարկեշտ չէր, այլեւ իրողութեան մէջ
 չափազանց գովասանքով կ'արտայայտուէր: Ան
 ինծի ուղղած էր իր նամակը, որովհետեւ զիս կը
 համարէր «Միացեալ Նահանգներու մէջ գործող
 հայկական լրատվական ամսագրի անդամներ-
 ընդմէջէն»: Ան իմ օտանդակութիւնս կը խնդրէր
 վերականգնելու համար վանայ լիճի Աղթամար
 կղզիի հայկական եկեղեցին: Նամակին վաւերա-
 կանութիւնը հաստատելու համար հեղինակին
 հետ հեռաձայնով խօսելէս ետք որոշեցի որոշ
 խմբագրումներով բաժիններ արտատպել այդ
 երկար, բայց հետաքրքրական նամակէն: Հեղի-
 նակը խնդրեց անայտ մնալ:

«Ինչպէս արդէն գիտես, Հայկական Ափիւ-
 քը աշխարհով մէկ տարածուած է Արեւելեան
 Անատոլիոնէն, որ ներկայիս կը գտնուի Թուր-
 քիոյ սահմաններէն ներս:

Աղթամարը հայկական եկեղեցի մըն է, որ կը
 գտնուի վանայ լիճի կղզիներէն մէկուն վրայ:
 Լիճը կը գտնուի Արեւելեան Թուրքիոյ վան նա-
 նահանգի մէջ: Եկեղեցին ինքնին զարեթ է ի վեր կը
 պայծառի կանգուն մնալու համար: Անիկա կա-

ռուցուած է Ք. Ե. 1000 թուականին, Գագիկ թա-
 գաւորին կողմէ: Հոն կը գտնուին շատ արժէքա-
 լոր քանդակներ, որոնք կը ներկայացնեն Գագիկ
 թագաւորին պատմութիւնը, եւ որոնք նուիր-
 ւած են Յիսուսի Յարութեան եւ Սուրբ Սիոնիին:

«1970ականներուն Ճափոնէն, Աւստրալիա-
 յէն, Ամերիկայէն, Նոր Զելանտայէն, Հարաւա-
 յին Ափրիկէէն, Սպանիայէն եւ Քանադայէն հա-
 զարաւոր պրօսաշրջիկներ կու գային այդ պաշ-
 տամունքի փոքր տունը այցելելու: 1979ին 170
 հազարի հասնող այցելուներուն թիւը 1995ին
 նուազած էր 6 հազարի: Այս նուազումին պատ-
 ճառք այն է, որ նկատի առած Աղթամարի հայ-
 կական եկեղեցի ըլլալը, թրքական կառավարու-
 թիւնը դիտմամբ կ'անտեսէ անոր հոգատարու-
 թեան եւ պահպանման անհրաժեշտութիւնը:
 Այնպէս կը թուի, որ Աղթամար կղզին եւ եկե-
 ղեցին մոռցուած են եւ անգոյ կը համարուին:
 Ներկայիս Աղթամարի կառուցը աւերակի վե-
 րածուած է բարենորոգութիւններու բացակա-
 յութեան պատճառով:

«Հայ թղթակից մը, որուն հանդիպեցայ
 Թուրքիոյ մէջ, ըսաւ, որ «մեզի համար Աղթա-
 մարը նաեւ խորհրդանշէ մըն է: Անոր վերակա-
 ռուցումով պիտի վերակառուցուին նաեւ անոնց
 հոգիները, որոնք այդ շրջաններէն տարածուած
 են աշխարհի չորս կողմը՝ կազմելով Հայկական
 Ափիւքը»: Ես, իբրեւ այդ հարցին կարեւորու-
 թիւնը ըմբռնող անձ մը, դիմեցի Մշակույթի նա-
 խարարութեան՝ անհրաժեշտ արտօնութիւնը
 ստանալու եւ այդ ծրագիրը իրականացման մէջ
 իմ համեստ դերակատարութիւնս ունենալու հա-
 մար: Նախարարութիւնը դրական պատասխան
 տուաւ:

«Շուրջ երեք տարի առաջ Պոլսոյ Առեւտու-
 րի Գրասենեակը պատրաստած էր Աղթամարի
 եկեղեցիին եւ կղզիին նորոգութեան ծրագիրը:
 Գրասենեակի տնօրէն Մեհմէթ Երլուբըմ
 խնդրած էր Պոլսոյ հայերէն եւ Թուրքիայէն
 դուրս գտնուող հայերէն, յատկապէս ամերիկա-
 հայերէն, որպէսզի օժանդակեն այդ ծրագիրը
 իրագործման: Անոր դիմումը անպատասխան
 չմնաց: Երեք տարի առաջ գրասենեակը դիմեց
 Մշակույթի նախարարութեան Աղթամար վերա-
 կառուցելու արտօնութիւն առնելու համար, սա-
 կայն նախարարութիւնը մերժեց անոր դիմումը:
 «Ես այս մասին տեղեկացայ «Հիւրիլիլ»-ին
 մէջ հրատարակուած յօդուածի մը ճամբով: Բա-
 րեկամներէս մէկը տեսակցութիւն ունեցաւ
 մշակույթի նախարարին հետ, եւ մենք խոստում
 ստացանք, որ արտօնութիւն պիտի տրուէր նո-
 ղողութեան ծրագրին: Այսպէս կապուեցայ
 Պոլսոյ Առեւտուրի Գրասենեակի ընդհանուր
 տնօրէնին հետ եւ յայտնեցի, որ Մշակույթի նա-
 խարարութիւնը պատրաստ է արտօնութիւն տա-
 լու: Դժբախտաբար տնօրէնէն ստացած պատաս-
 խանս ցնցեց զիս. ան ըսաւ, որ ներկայի քաղա-
 քական կացութեան պատճառով մենք չենք ու-
 գեր մասնակից դառնալ այդ ծրագրին:
 «Իրականութիւն մը կայ, որ պէտք է հրապար-
 ակ բերուի: Ինչպէս ըսինք, գրասենեակի տնօ-
 րէնը փորձած էր հայեր ներգրաւել այդ ծրագրի-
 ընդմէջ, եւ շատ մը հայեր Թուրքիայէն թէ
 դուրսէն ընդառաջած էին անոր կողմէ, Պոլսոյ
 մէջ հրատարակուող «Ակոս» թերթին մէջ լոյս
 տեսած հարցազրոյցէն Ֆրանսայէն եւ Միացեալ
 Նահանգներէն, ինչպէս նաեւ Թուրքիոյ նա-
 հանգներէն եւ մշակութային հիմնարկներէն

շատ մը առեւտրականներ պատրաստակամու-
 թիւն յայտնեցին մասնակցելու պէտք եղած
 ծախսերուն: Սակայն, ըստ երեւոյթի, գրասենե-
 ակին տնօրէնը ի սկզբանէ անկեղծ չէր իր նա-
 խաձեռնութեան մէջ. ան պարզապէս կ'ուզէր
 դրամ կորզել հայ անհատներէ կամ հայկական
 կազմակերպութիւններէ եւ արտօնութիւն
 չստանալու պատրուակով ես կենալ ծրագրի
 իրականացումէն: Դժբախտաբար այդ ծրագրի-
 րը երեք տարի է ի վեր կը սպասէ նախաձեռնու-
 թեան:

«Եթէ դուք պատրաստ էք նեցուկ կանգնելու
 մեզի, մենք քանի մը օրուան մէջ կ'ընենք ապա-
 հովել Մշակույթի նախարարութեան հաւանու-
 թիւնը, որմէ ետք կարելի է անմիջապէս գործի
 անցնել: Ես խորապէս համոզուած եմ, որ Աղթա-
